Հասմիկ Պետրոսյան
Հայաստանի պատմության թանգարան
hasmikpetrosyanmuseum@gmail.com

ԳՈՒԳԱՐՔԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ ԲՈՒՍԱՆԱԽՇ ԳՈՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԸՍՏ ՀՊԹ, ՀԱԹ, ԼՓԵԹ, ԵՔՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ)*

Հիմնաբառեր. Գորգ, կարպետ, բուսանախշ, տեխնիկական տվյալներ, հիշատակագրություններ, մարդապատկերներ, Գուգարք:

Ներածություն

Հետազոտողների կողմից գորգագործությանը վերաբերող աշխատություններում ընդհանուր առմամբ քննարկվել են գորգի ծագումնաբանությանը, դրանց ծիսապաշտամունքային նշանակությանը, զարդաձևերին, աղբյուրագիտական գրականության մեջ դրանց հիշատակություններին վերաբերող և այլ հարցեր: Սույն աշխատանքում անդրադարձ է կատարվել Գուգարքի[1] գորգագործական կենտրոններին պատկանող բուսածաղկային հորինվածքներով գորգերին[2], որոնք հյուսվել են 19-ից 20-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում: Դիտարկվել են գորգերի և կարպետների 188 օրինակներ՝ Հայաստանի պատմության, Հայոց ազգագրության, Լոռի-Փամբակ երկրագիտական, Երևան քաղաքի պատմության թանգարանների, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության, Հրաչ Կոզիբեյոկյանի և Մարկ Քեշիշյանի գորգի անձնական հավաքածուներից: Թանգարանային նմուշների մեծ մասը, բացառությամբ Հայաստանի պատմության թանգարանի (Հայերեն արձանագրությամբ գորգեր 2010) և Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության գորգերի և կարպետագործ առարկաների հավաքածուի մի քանի օրինակների (Պողոսյան 2018), երբևէ չեն հրատարակվել: Մեծաթիվ առարկաներ պահպանվում են Հայոց ազգագրության թանգարանում: Դրանց գործածման միջավայրի ու պատրաստող վարպետների մասին տեղեկություններով և այլ մանրամասներով առանձնանում է, հատկապես, Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուն, որն արդյունք է 1934–1935, 1960, 1963, 1968, 1972 թվականներին դեպի Լոռի կատարված գիտարշավների:

---

* Ստացվել է՝ 09.05.2022 թ., ուղարկվել է գրախոսման՝ 01.06.2022 թ., ընդունվել է տպագրության՝ 05.08. 2022 թ.:

1 Դիտարկված օրինակների ծագման կամ գործածման մեզ հայտնի բնակավայրերն են. Օձուն, Դսեղ, Սանահին, Շնող, Գուգարք, Մարց, Աթան, Աքորի, Լեջան, Ամոջ, Շամուտ, Սարահարթ, Ճոճկան, Գյուլագարակ, Գյարգյառ, Բանավան, Չկալով, Տաշիր, Սպիտակ, Վանաձոր, Կողբ:

2 Պատկերային համակարգը քննելիս դիտարկվել են նաև կարպետներ:

Չնայած գորգագործության տարածաշրջանային ավանդույթների փոխազդեցություններին և որոշ հատկանիշների ու ընկալումների ընդհանրություններին, այս կամ այն խմբում առանձնանում են տեխնիկական, բովանդակային և այլ բնորոշ գծեր: Նման բազմազանությունը էականորեն բազմաշերտ է դարձնում այս կամ այն շրջանի գորգագործության ավանդույթները: Հոդվածի շրջանակներում դիտարկել ենք գերազանցապես տնայնագործ աշխատանքները՝ տալով դրանց տեխնիկական և բովանդակային հատկանիշներն ու յուրահատուկ գծերը:

Տեխնիկական տվյալները

Մեր կողմից դիտարկված գորգերի խմբի հիմնական մասը պատրաստված են բրդյա հիմնաթելից (ուշ շրջանի մի քանի օրինակներ պատրաստված են բամբակյա հիմնաթելից), բաց կամ մուգ շագանակագույն և փղոսկրագույն են, և որպես կանոն բաղկացած են երեք մանրաթելերից (ուղղությունը՝ S):

Միջնաթելերը գերազանցապես բաց կամ մուգ շագանակագույն և փղոսկրագույն են, առանձին դեպքերում՝ կարմրադարչնագույն[3]: Դրանք կազմված են երեք, երբեմն երկու մանրաթելերից (ուղղությունը՝ S): Շարքերի քանակը, որպես կանոն երկուսն է, հանդիպում է նաև՝ երեք, փոքր հատվածներում տեղ-տեղ երբեմն հասնում է չորսի:

Փաթույթների շարքերը երկուսից կարող են հասնել մինչև վեցի: Գերակշռում են երեք և չորս շարքերից կազմված օրինակները:

Տնայնագործ գորգերում հաճախ է հանդիպում տեխնիկական «անկայունություն», այն է փաթույթների աջ ու ձախ կողմերում տարբեր քանակություն, միջնաթելերի անկանոն գործածություն, ինչը պետք է կապել այն հանգամանքի հետ, որ դրանք հանդիսանում են տարբեր գորգագործուհիների ձեռքի աշխատանք: Փաթույթների համար օգտագործվել են կարմիրի և շագանակագույնի երանգները, հաճախ նաև՝ բազմագույն թելեր:

Լայնակի վերջավորությունների պահպանված բոլոր օրինակներում կարպետագործ հատվածները ծալված, կարված են, ի տարբերություն արցախյան խմբի, որոնց բնորոշ են բազմազան տարատեսակներով զամբյուղահյուս ավարտները:

Հատկանշական առանձնահատկություններից մեկն էլ բարձր խավն է, որը հավանաբար պետք է կապել բնակարանային և կլիմայական պայմանների հետ[4]:

---

[3] Հայկական գորգագործության ավանդույթների համաձայն հիմնաթելի, միջնաթելի և խավի թելերի համար օգտագործում էին տարբեր որակի թելեր: Մշակված ամենաորակյալ թելը (բերանը), որը կոչվում էր «ծեռ» կամ «իստակ», օգտագործվում էր հենքը և միջնաթելերը անցկացնելու համար, որպեսզի ամուր ստացվի, իսկ որակապես համեմատաբար զիջող բուրդը, որ կոչվում էր «միչեկ», նախատեսում էին հանգույցներն անելու համար (Թեմուրճյան, 1958, 60):

[4] Այստեղ «բնակարաններն առողջապահական տեսանկյունից շատ մեծ պակասություններ ունեն, …օրինակ խոնավ են… երբեք չեն տաքանում…» (Լալայեան, 1903, 153), իսկ բուրդը, բարձր խավը խոնավությունը կլանող և ջերմություն արձակող հատկանիշներ ունի:

Պատկերային համակարգը

Բուսածաղկային հորինվածքները գորգագործական մշակույթում բազմաթիվ մեկնաբանություններ ունեն և թերևս ամենատարածվածներից են: Նշված խմբում դրանք արտահայտված են ծառի տեսքով (նկ.1 ա, բ)[5], մանրիկ, ողջ դաշտն ընդգրկող մանր բուսանախշերով (նկ.2 ա, բ)[6], նշանաձև պատկերներով (նկ.3 ա, բ, գ)[7], վարդակներով՝ բնական, մանրամասներով[8], հաճախ՝ երկրաչափականացված (նկ.4 ա, բ)[9], ներկայացված են՝ փնջերով (նկ.5 ա, բ)[10], շարքերով (նկ.7 ա, բ, գ)[11], շրջանակների մեջ կամ այլ հորինվածքներին զուգահեռ: Իրենցից ներկայացնում են շրջակա բուսական աշխարհի վերարտադրություններ, ծիսական ծառեր, եվրոպական ազդեցությամբ փնջեր: Սրանց համար հիմնագույն են ծառայել գլխավորապես կարմիրի երանգները, մուգ կապույտն ու մուգ շագանակագույնը:

Շրջապատվելով բուսական հարուստ ու բազմազան աշխարհով, բույսերը ավանդաբար գործածվել են որպես սնունդ, դեղաբույս, տեղ գտել ծիսապաշտամունքային համակարգում (Լալայեան 1903, էջ 141, 185–187)[12]՝ խորհրդանշելով բարօրություն, առատություն, սերնդաճ, բախտավորություն, պատկերել ազգակցական հարաբերությունները, կապվել՝ ուրախության հետ: Դիտարկված օրինակներից մի մեծ խումբ, ըստ ձեռքբերման տվյալների, աղջիկները հյուսել են որպես ընծա փեսայի տան համար: Հարսանեկան ծեսում ծաղիկները օգտագործվել են որպես զարդարման նյութ, հարսանիքից առաջ հրավերագրերի փոխարեն էին ուղարկվում, ծաղիկներով էին զարդարում նորապսակների կառքը, յոթ տեսակ ծաղիկներով գուշակություններ էին անում և այլն: Հարսանեկան ծեսում առանձնացված թախտը հարդարվում էր գորգերով և կարպետներով, որոնք «բաղ» էին անվանում (Մխիթարեանց, 1901, 244): «Ծաղկանոցներում» գովերգվում էին հարսն ու փեսան: Հարսանքավորները մերթ հարսին, մերթ փեսային, մերթ էլ երկուսին միասին դիմելով, համեմատում էին իրենց երկրի ամենաչքնաղ ծաղիկների հետ: Այս պատկերացումներով են հիմնավորվում ծաղկանախշերով հարդարված հարսանեկան գորգերի առատությունը:

Փնջային հորինվածքներով գորգերը վերագրվում են առևտրական միջավայրի հետ կապված լինելու հանգամանքի հետ: Նման օրինակներում հանդիպում

---

5 Գորգի նմանօրինակներ տես ՀԱԹ, 6574/3 և 6574/4, Աթան, 1940 թ., 1941 թ., գործ. Սոնա (մայրը) և Ոսկեհատ (դուստր) Փիրուզյանների: Սրա վաղ օրինակ. կարպետ 1931 թ., այժմ գտնվում է Նոյեմբերյանում,ԴԹ 82/2, կարպետ, Լոռի-Տավուշ, 1934 թ.:

6 Տես նաև՝ ՀԱԹ, 6938/7, 352, 3657, 3995, 2888, ՀՊԹ, 11099, 9545, 9600:

7 Տես նաև՝ ԵՔՊԹ, 12879, ԼՓԵԹ, 949, ՀԱԹ, 7215:

8 Տես նաև՝ ՀՊԹ, 11495, ՀԱԹ, 5795, 5409, 2957, 3004:

9 Տես նաև՝ ՀԱԹ, 7479, 7281, 6562, 7308:

10 Տես նաև՝ ԵՔՊԹ, 2775/1, ԼՓԵԹ, 2194, ՀԱԹ, 7430, 1171, 2619, 6938/95, 70, 7503, 7222, 3760:

11 Տես նաև՝ ՀԱԹ, 7215, 3705, 7593, 7146, 7203, ՀՊԹ, 7594/1:

12 «Հաղբատի մօտ, Ս.Լուսի լերան ստորոտում մի հաճարի ծառ կայ, որ սուրբ է համարվում: Մելքոնենց Ալեքսանի կինը գնացել այդ ծառի բնի և ճիւղերի միջով գոյացած անցքով երեք անգամ անցել է և երեխաներ ունեցել, մինչդեռ տասնչորս տարի շարունակ ամուլ է եղել» (Լալայեան 1903, էջ 185–189):

ենք նաև կենցաղային սպասքի պատկերների (նկ. 6 ա, բ, գ): Ինչ վերաբերում է ծառերի, բույսերի արտահայտվածությանը, սրանք ներկայացված են կառուցվածքային մանրամասնություններով:

Այս խմբում հաջորդ տարածված շարքը կենդանապատկերներն են, որոնք գորգերում հանդես են գալիս ոճավորված և բնական արտահայտությամբ: Երկրորդ խմբում հատկապես տարածված են եղջերուի և սիրամարգի պատկերները (սրա մասին առավել մանրամասն տե՛ս Թեմուրճյան, 1955, 84), որոնց տեղացիները «Պախրենի» անունն են տվել (առավել մանրամասն տե՛ս Ավանեսյան, 2009, 9): Սրանք հաճախ հանդես են գալիս մեկական՝ պատկերվելով որպես բնապատկերի կենտրոնական բաղադրիչ՝ վերածվելով բնական տեսարանի վերարտադրության[13] (նկ. 8ա) և զույգ պատկերներով՝ գլխավորապես ծառի երկու կողմերում[14] (նկ. 8բ) (սրա մեկնաբանությունների մասին առավել մանրամասն տե՛ս Մնացականյան, 1955, 256–264):

Եզրագոտիները

Գորգի գոտին դիպի կենտրոն մուքը արգելելու, այն պաշտպանելու խորհուրդ ունի (սրա մասին առավել մանրամասն տե՛ս Իսրայելյան 2019, 11–12): 19–20-րդ դարերում հյուսված գորգերը հիմնականում բոլորվում են մի քանի գոտիներով, հաճախ կրկնվող շերտերով և բարդ պատկերներով: Նշված խմբի ոչ մի օրինակ չի սահմանվում բարդ հորինվածքներով, ինչը արտահայտվում է այս շրջանի այլ խմբերում: Այստեղ, որպես կանոն, ունենք ընդամենը մեկ եզերող գոտիներ, որոնք շարունակում են դաշտի «ազատ», «ընդարձակ» պատկերը: Այսպիսով, բնական միջավայրի վերարտադրություն հանդիսացող այս առարկաները պատկերվել են ընդարձակ կերպով, առանց արգելքների և սահմանների, որը, ըստ էության, արտահայտությունն է շրջակա միջավայրի հանդեպ ունեցած ընկալումների:

---

[13] ՀԱԹ, 3555, գորգ, Լոռի, 1918 թ., արձ.՝ «1918 թ. ԱՄԻ ՆՎԱՐԹ.ԱՂԱԲԷԳԵԱՆ , Գ»:
ԼՓԵԹ, 2154/2, կարպետ, Ահնիձոր, 20-րդ դարի սկիզբ:
ԼՓԵԹ, 2219/4, կարպետ, Լոռի, 20-րդ դարի սկիզբ:
ՀՊԹ, 6082, գորգ, Գուգարք, 1928 թ., արձ.՝ «1928 թ. 18մ սոփիա»:
ՀԱԹ, 7670, կարպետ, Լոռի, 1930-ական թթ.:
ԵՔՊԹ, 3040, գորգ, Լոռի, 1932 թ., ., արձ.՝., «1932 թ .ապ 1ին . Սուրեն ՇԱ, . ՐԱՐ»:
ՀԱԹ, 510, գորգ, Գուգարք, 1933 թ., արձ.՝ «1933 թ .»:
տե՛ս նաև Հրաչ Կոզիբեյոկյանի հավաքածուն, Լոռի, արձ.՝ «1930.Թ.» (շրջագիր):

[14] ՀԱԹ, 7229, գորգ, Լոռի, 1915թ., արձ.՝ «1915 ԹՆ»:
ԼՓԵԹ, 1419, կարպետ, Չկալով, 20-րդ դարի սկիզբ:
ԴԹ, 191/7, կարպետ, Լոռի, 1936 թ., արձ.՝ «1936 թ.», տե՛ս Պողոսյան Ա., Կատալոգ գորգերի և կարպետների հավաքածուի, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության ՊՈԱԿ, Երևան, 2018, էջ 157:
ԴԹ, 133/5, կարպետ, Լոռի, 1930-ական թթ., արձ.՝ «1936 թ.», նույն տեղում, էջ 156:
ՀԱԹ, 3070, կարպետ, Կողբ, 1934 թ., արձ.՝ «1934 թ.»:
ՀԱԹ, 2707/2, կարպետ, Լոռի, 1930-ական թթ., արձ.՝ «An ME1/IV 392, ա, մ, ու»:
ԼՓԵԹ, 2168, կարպետ, Շամուտ, 1940 թ.:
ԼՓԵԹ, 926, կարպետ, Լոռի, 1941 թ., արձ.՝ «1941 թ. Ռ.Դ»:
ՀՊԹ, 10602, կարպետ, Աքորի, 1948 թ., գործ՝ Անահիտ Պետրոսյանի, արձ.՝ «1948 թ. ԱՆԱՀԻՏ»:
ՀԱԹ, 4239, կարպետ, Սպիտակ, 1948 թ., արձ.՝ «1948 թ.»:

Արձանագրությունները

Դիտարկված խմբում 188 առարկաներից 133-ը՝ արձանագրություն կրող գորգեր և կարպետներ են: Սրանք, անշուշտ, նպատակային հյուսված օրինակներ են և նպատակ են ունեցել բավարարելու սեփական կարիքները կամ հյուսվել են անհատական պատվերով: Ուստի նաև սրանով է պայմանավորված հիշատակագրություն պարունակող օրինակների նման առատությունը, ինչից զատ, հետաքրքիր են նաև «գրելու» ձևերը, դրանք շեշտելու տարբերակները, որոնց ինչպես նկատում ենք, առանձնահատուկ նշանակություն է տրվել: Սակավաթիվ օրինակներում մատնանշվում է արձանագրությունը կրող առարկայի անունը. «1917 թ. 1 եվարի այս ձունձ պատկանում է մանիկ հoսեց»[15], «ԽԱԼԻՆ ՊԱՏ. ԱՂԱՋԱՆԱԹ 8» (նկ.7 բ), կարմիր հիմնադաշտով մի օրինակի վրա էլ՝ «1904 ԱՄի չալն ալ նվիրում էմ վարթանուշին»[16] (նկ.5բ), արձանագրություն թողնելը՝ «աստղիկ առաքելյան գրեց ապրիլի 10 I 1903Թ, սoնա» (Eiland 2002, 80):

Դիտարկված խմբի օրինակներում հիշատակագրությունները դաշտի վերնամասում են՝ «որպես վերնագիր», գլխավոր հորինվածքներին մոտ՝ ակներև հատվածներում (եզրագոտու մեջ առավել հազվադեպ ենք հանդիպում, ինչը ևս մի վկայություն է, որ դրանք կարևորվել են): Երբեմն առնված են շրջանակի մեջ, արձանագրված հատվածները շեշտված են հորինվածքում գերակշռող հիմնագույնով կամ ակներև մեկ այլ գունավորմամբ:

Գրության ձևն ու բովանդակությունը. գրությունը ձախից աջ է, ընդհանուր առմամբ՝ հավասարաչափ: Անվանումներ, ամսանուններ, արտահայտություններ պարունակող արձանագրություններում տառերը, բառերը միմյանցից անջատվում են կետերով, առանձին դեպքերում պահպանվում է հեռավորությունը: Հաճախ ենք հանդիպում կցագրված, համառոտագրված օրինակների՝ համապատասխան նշանի գործածմամբ[17]: Տնայնագործ օրինակներում նման երևույթը կարծում ենք կապվում է նաև որոշակի կրթական մակարդակի հետ:

Դիտարկված օրինակներում մի մեծ խումբ են կազմում թվակիր արձանագրություններով օրինակները, որոնց որպես կանոն հետևում է կցագրված ԱՄԻ (տարի) կամ թ տառը (թվական): 20-րդ դարում հյուսված օրինակների թվագրությունը առավել հստակ է. ներառում է օրը, ամիսը՝ ամբողջական անվանմամբ, հոլովվելով, հապավումով (օր.՝ Ա.պ., ապր = ապրիլ, մար = մարտ և այլն): Ամսանուններից զատ ունենք նաև հռոմեական թվերով արտահայտված օրինակներ ($19^{7}/_{VI}$ 07թ., $19^{9}/_{IV}$12ԱՄԻ, $19^{15}/_{I}$ 31 ԹՆ, An ME1/IV 392., 10 IIII 935.Թ.Բ.Ղ, 9 II 36 Թ. Բ. Գ)[18]:

Թերևս առավել հետաքրքրական են ընդարձակ գրությամբ գորգերն ու կարպետները: Դաշտի մեջ ցրված տառերի անկանոն գործածությունը գորգերում հազվադեպ հանդիպող երևույթ է, ինչը կարպետներում առավել հաճախ ենք նկա-

---

15 ՀԱԹ, 6479/3, կարպետ, Լոռի, 1917թ., (արձանագրության մեկնաբանությունը ըստ անձնագրային տվյալների):

16 ՀԱԹ, 5908/3, գորգ, Ագարակ, 1904թ.:

17 ՀԱԹ, 5908/3, 5387, տես նաև Թաթիկյան, 2004, N183:

18 Տես նաև՝ ՀԱԹ, 2618, 7439, 615/2, 2707/2, 5775, 6555:

տում: Տեքստերում կան անվան սկզբնատառեր, անուններ (գործողի, պատվիրատուի, ընծայողի, ընծան կրողի[19]), նվիրատվական բնույթի գրություններ. «1904 ԱՄԻ չ ա լն ալ նվիՐում է մ վաՐԹան ուշին» (նկ. 5բ), «Գ. Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ 1927 Թ . ՄԱՐՏԻ 29 Ի ն. ՆՎԻՐ ու մ Է ՄԱՅՐԸ. ՄԱՐԳԱՐԻՏԸ.ա»[20], «ՕԼԻՆԿԱ ԲԱԳՐԱՏ 1922Թ., Գուլխաս, խանում» (նկ. 4բ), «ԻՎԱԵԼՈՒՄՆ ԱՆՈՒՇ ՅԻՆ 1901 ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆ I» (նկ. 2բ)[21]:

Հիշատակագրությունները թողնվել են անցյալ և ներկա ժամանակաձևերով, ըստ այդմ կարող ենք ենթադրել, որ դրանց թվագրումները ֆիքսում են հյուսելու կամ դրա մոտ ժամանակահատվածը:

Գորգի ու կարպետի հարթության արձանագրությունների ընկալումները և պատկեր թողնելու երևույթը

Ի հակադրություն հիշատակագրության «սովոր» հարթությունների, որոշակի համեմատական վերապահումներով, գործվածքը՝ մասնավորապես գորգը, պահպանության նույնքան երկարատևություն չի երաշխավորում, այնուամենայնիվ 19–20-րդ դարերի ազգագրական և բանահյուսական նյութերում այս առարկաներին վերագրվող պատկերացումները դեռ շարունակվում են կապվել մշտապես գոյություն ունեցող երևույթի հետ: Սրանց վրա արված գրությունները շարունակում են ֆիքսել անցյալն ու ներկան և միտված են դեպի ապագան, հավերժը: 1994 թ. Սարիգյուղում ապրող գորգագործներից մեկը՝ Արուս Ղազարյանը (ծն. 1929 թ.) իր գործած գորգի վրա գրում է 1992 թ. զոհված որդու՝ Սամվել Ղազարյանի անվանատառը. բացատրելով, որ որդին հավերժ դրա մեջ է (Ավանեսյան 2009, 9):

Ըստ արձանագրությունների՝ հյուսելու նպատակային առիթները բազմազան են. առանձնանում են անցումային իրադարձությունների հետ կապվող խմբեր. հարսանեկան, հիշատակի, ուխտի և այլ առիթների: Առանձնացված ընտրանուց մի զգալի խումբը հարսանեկան գորգեր և կարպետներ են, որոնք ըստ էության կյանքի կարևոր անցումներից մեկը «փաստագրելու» գործառույթ ունեին, սրանց արձանագրություններն ու պատկերները նպատակադրված էին ֆիքսելու այս մեկնակետը. ժամանակն ու գործող անձանց (նկ. 9): Ազգագրական դաշտային հաղորդումնե-

---

19 Քննվող առարկաները նաև սկզբնաղբյուրային նշանակություն ունեն տվյալ ժամանակահատվածում գործածված անվանումների համար. Անսա, Անուշ, Արամ, Անահիտ Պետրոսյանի, Ավետիք Աբովեան, Ազիզ Վարդումով, Արութին Վարդանյան, Գայանե Ազարյան, Գյուլիզար Մալումյան, Գեվորք, Երվանդ, Եղսապետ Հարությունյան, Ջարման, Ջանան, Խանում, Փառանձեմ, Մանաս, Մարուս, Մանիշակ, Մոսինո, Մարգո, Մարգարիտ Վարդումեան, Մակա Աբովեանց, Մուրադ Գուլխաս, Մ. Մալերով, Մոսինո, Նազիկ, Նարգիզ, Նվարթ, Նատալիա Աղաբեկյանց, Նաղիշ, Նէրսէս Նազամեանց, Ոսկեհատ Բաբուրյանը, Ոսկեհատ Փիրուզյաններ, Ոլինկա Գալոյան, Ոլինկա, Կատինկա, Հասմիկ, Հէրիգնազ, Հասմիկ Շահվերդյանի, Հէրիգնազ, Երվանդ, Սուրեն, Սոփիա, Սոնա Հովսեփյանի, Սիրան Թունյան, Սաթենիկ Վարդումյանի, Սուսան, Ղազարյան, Սաթենիկ Վասիլի Մեհրաբյան, Շուշանիկ, Սիրանուշ, Սիրան Բենիկով, Սոնա Փիրուզյաններ, Սուրեն, Վերինկա, Վարդանով, Օվակիմա, Օվակիմ Փարսադանեց, Իսկուհի Փարսադանեց, Խակաթ, Խանոյան, Շահեր Աբովյանի, Շուշանիկ, Պայծառ Նավասարդյանին:

20 ՀԱԹ, 5319:

21 ՀԱԹ, 4889/3:

րի համաձայն 19-րդ դարի ավանդական հարսանեկան ծիսակարգում տղայի տանը «թախտ» էին կապում, գորգեր, «ձունձ» (կարպետ) կախում, հարսին գոտի կապելուց հետո նստեցնում փեսայի կողքին (Երզնկեանց 1898, 321, 333): Խորհրդային տարիներին՝ անկախ հարսանեկան խնջույքի անցկացման վայրից, լիներ դա փեսայի տանը, գյուղի կենցաղի կամ մշակույթի տանը, դպրոցի, մանկապարտեզի շենքում, թե վրանի ներսում, գորգով ու կարպետով էր նշվում նորապսակների համար առանձնացված հատվածը (Շագոյան 2011, 243): Այս ընթացքին, ավանդական գորգերին փոխարինելու եկան դրանց արտադրական օրինակները, որոնք ի տարբերություն նախորդ արձանագրված օրինակների, կրում էին բամբակե վերադիր «արձանագրություններ». անվանումներ կամ սկզբնատառեր, բարեմաղթանքներ (նկ.10 ա, բ) (Շագոյան 2011, 243, 245): Այս հարթությանը կյանքի հաջորդ փուլին անցման բարեմաղթանքները վստահելու ավանդույթը պահպանվել է մինչև 2000-ականները: Ժամանակակից ծեսում, սրանք կարծես թե դրսևորումներ չունեն:

Այս առիթով հյուսված օրինակներում արձանագրություններ թողնելու երևույթը նաև արտահայտում է որոշակի գրագիտության մասին, որը գուցե լրացներ աղջկա գովելի հատկանիշների շարքը: Վ.Թաթիկյանը Արցախի գորգագործներից Գուլխասի գորգերը օրինակ բերելով նշում է, որ վերջինս 20-րդ դարի սկզբին տասից ավելի օրինակներ է հյուսել և միայն փեսացուի տան համար տարվելու օրինակի վրա է հիշատակարան թողել (Թաթիկյան 2004, №200):

Մարդապատկերներ

Անվան շեշտադրումից զատ, մարդապատկերների ներկայացումը, այդ թվում «ինքնաներկայացումը» առարկան անհատականացնելու և հավերժ գոյություն ունեցող հարթություն փոխադրելու ևս մի ձև է: Այս խմբի որոշ օրինակների ստեղծման ազատությունը հիմք են, որպեսզի ունենայինք նաև ինքնապատկերներով գորգերի օրինակներ, որոնց շրջանակներում կարծես անհատականացվում են առարկաները՝ երբեմն կրելով և՛ պատկեր, և՛ անուն:

Ամփոփում

Այսպիսով, մեր կողմից քննվածը, ինչպես նշվեց, միայն մի խումբն էր այս շրջանում հյուսված օրինակներից, որոնց դիտարկումը թույլ տվեց մի քանի հատկանիշներ առանձնացնել: Մասնավորապես, սրանցից որոշներում նկատեցինք տեխնիկական անկայունություն, հորինվածքային հատկանիշներում՝ անհատականացման միտումներ և ազատ ինքնաարտահայտման լայն դրսևորումներ: Ինչ վերաբերում է հիշատակագրություններին, ապա դրանք պատկանելիությունը ֆիքսելու, հավերժ գոյություն ունեցող հարթության մեջ անհատական տվյալները փոխադրելու և գրագիտության որոշակի մակարդակը ցուցադրելու նպատակ են հետապնդել: Դիտարկելով հիշատակագրությունների տեղադրությունը, ձևը, համառոտագրության, կցագրման ձևերը կարող ենք ասել, որ դրանցում առկա էին կանոնիկ և անհատական մոտեցումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թանգարանային առարկաներ

ԴԹ, 133/5	ՀԱԹ, 2618	ՀԱԹ, 5409	ՀԱԹ, 7229
ԴԹ, 191/7	ՀԱԹ, 2619	ՀԱԹ, 5775	ՀԱԹ, 7281
ԵՔՊԹ, 3040	ՀԱԹ, 2707/2	ՀԱԹ, 5795	ՀԱԹ, 7430
ԵՔՊԹ, 12879	ՀԱԹ, 2888	ՀԱԹ, 5908/3	ՀԱԹ, 7479
ԵՔՊԹ, 2775/1	ՀԱԹ, 2957	ՀԱԹ, 6479/3	ՀԱԹ, 7308
ԼՓԵԹ, 926	ՀԱԹ, 3004	ՀԱԹ, 6555	ՀԱԹ, 7439
ԼՓԵԹ, 949	ՀԱԹ, 3070	ՀԱԹ, 6562	ՀԱԹ, 7503
ԼՓԵԹ, 1419	ՀԱԹ, 3555	ՀԱԹ, 6574/3	ՀԱԹ, 7593
ԼՓԵԹ, 2154/2	ՀԱԹ, 3657	ՀԱԹ, 6574/4,	ՀԱԹ, 7670
ԼՓԵԹ, 2168	ՀԱԹ, 3705	ՀԱԹ, 6938/7	ՀՊԹ, 6082
ԼՓԵԹ, 2194	ՀԱԹ, 3760	ՀԱԹ, 6938/70	ՀՊԹ, 7594/1
ԼՓԵԹ, 2219/4	ՀԱԹ, 3995	ՀԱԹ, 6938/95	ՀՊԹ, 9545
ՀԱԹ, 352	ՀԱԹ, 4239	ՀԱԹ, 7146	ՀՊԹ, 9600:
ՀԱԹ, 510	ՀԱԹ, 4889/3	ՀԱԹ, 7203	ՀՊԹ, 10602
ՀԱԹ, 615/2	ՀԱԹ, 5319	ՀԱԹ, 7215	ՀՊԹ, 11099
ՀԱԹ, 1171	ՀԱԹ, 5387	ՀԱԹ, 7222	ՀՊԹ, 11495

Գրականություն

ԱՎԱՆԵՍՅԱՆ 2009 – Ավանեսյան Լ., Իջևանի ժամանակակից գորգագործության մի քանի հարցեր, Տավուշ նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009:

ԵՐԶՆԿԵՄՆՑ 1898 – Երզնկեանց Գ., Լօռուայ հարսանիք, Ազգագրական հանդես, հանդէս, Գիրք III, Թիֆլիս, 1898, էջ 329 – 337:

ԹԱԹԻԿՅԱՆ 2004 – Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004:

ԹԵՄՈՒՐՃՅԱՆ 1955 – Թեմուրճյան Վ., Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2019 – Իսրայելյան Ա., Հայկական գորգերն ու կարպետները, հոդվածների ժողովածու, Երևան, 2019:

ԼԱԼԱՅԵԱՆ 1903 – Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, Ազգագրական հանդէս, Գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 113 – 268:

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԳԵՐ 2010 – Հայերեն արձանագրությամբ գորգեր, Ալբոմ-կատալոգ, Երևան, 2010:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1955 – Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Երևան, 1955:

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ 1901 – Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, հտ.Ա, Մոսկվա, 1901:

ՇԱԳՈՅԱՆ 2011 – Շագոյան Գ., «Յոթ օր, յոթ գիշեր». հայոց հարսանիքի համապատկեր, Երևան, 2011:

ՊՈՂՈՍՅԱՆ 2018 – Պողոսյան Ա., Կատալոգ գորգերի և կարպետների հավաքածուի, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության ՊՈԱԿ, Երևան, 2018:

EILAND, 2002 – Eiland M., Passages: Celebrating Rites of Passage in inscribed Armenian Rugs, San Francisco, 2002.

Հապավումներ

ԴԹ – Դիլիջանի թանգարան:

ԵՔՊԹ – Երևան քաղաքի պատմության թանգարան:

ԼՓԵԹ – Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան:

ՀԱԹ–Հայաստանի ազգագրության թանգարան:
ՀՊԹ–Հայաստանի պատմության թանգարան:

Hasmik Petrosyan
History museum of Armenia
hasmikpetrosyanmuseum@gmail.com

GENERAL DESCRIPTION OF HANDICRAFTS FLORAL RUGS OF GUGARK REGION
(ACCORDING TO THE SAMPLES OF HISTORY MUSEUM OF ARMENIA, MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY, LORI-PAMBAK GEOLOGICAL MUSEUM, YEREVAN HISTORY MUSEUM)

Keywords: Rug, carpet, floral rugs, technical dates, inscriptions, images of people, Gugark.

Albeit the interactions of rug weaving regional traditions and features, some samples with peculiar technical and content characteristic features can be identified in each regional group. Such distinctions make the rug weaving traditions typical to a certain area multi-layered and complex. In this research we particularly observe the handcraft rugs and carpets from Gugark region (the exact places of origin of the rugs are indicated in the footnotes). To satisfy private needs, there wasn't any attempt to prevent individualism, and the samples are differentiated based on the independence of the applied techniques and the choice of the ornaments.

Based on this, we attribute technical, conceptual features and typical traits of the rugs of Gugark region. Moreover, in the observed samples, a very unique aspect is the inscription on the rugs, which reflects the content, the way of writing, the occasions and the notion of making inscriptions.

Асмик Петросян

Музей истории Армении
hasmikpetrosyanmuseum@gmail.com

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА КОВРОВ С РАСТИТЕЛЬНЫМ ОРНАМЕНТОМ РУЧНОЙ РАБОТЫ ГУГАРКСКОГО РАЙОНА
(ПО МАТЕРИАЛАМ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ, МУЗЕЯ ЭТНОГРАФИИ АРМЯН, ЛОРИ-ПАМБАКСКОГО КРАЕВЕДЧЕСКОГО МУЗЕЯ, МУЗЕЯ ИСТОРИИ ГОРОДА ЕРЕВАНА)

Ключевые слова: Ковёр, ковровое покрытие, растительный орнамент, технические даты, надписи, изображения людей, Гугарк.

Несмотря на взаимодействие региональных традиций и особенностей ковроткачества, в каждой региональной группе можно выделить отдельные образцы со своеобразными техническими и содержательными характерными чертами. Подобное разнообразие способствует многослойности традиций ковроткачества. В настоящей статье мы в частности рассмотрели ковры и ковровые покрытия ручной работы Гугаркского района.

Удовлетворяя частные нужды, в них не было сделано попыток ограничить индивидуальные подходы, и, следовательно образцы,различаются по технической свободе и выборе изображений.

Основываясь на этом, мы охарактеризовали технические, содержательные особенности и характерные особенности ковров Гугаркского района. Более того, в рассмотренных примерах очень своеобразным свойством являются надписи на коврах, в которых отражаются содержание, форма письма, повод и идею создания надписи